ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Պ-334[1]-27.11.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի «86 տոկոս» բառերը փոխարինել «90 տոկոս» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2014 թվականի հունվարի 1-ից հետո՝

ա) խաղատուն և/կամ շահումով մեքենայացված խաղ և/կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կարող է կազմակերպվել՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի վարչական սահմաններում, Վայոց ձորի մարզի Ձերմուկ համայնքի վարչական սահմաններում, Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի վարչական սահմաններում, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավորությամբ և չափանիշներին համապատասխան տարածքներում.

բ) խաղատուն և/կամ շահումով մեքենայացված խաղ և/կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կարող է կազմակերպվել՝ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում.

գ) խաղատուն և/կամ շահումով մեքենայացված խաղ և/կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կարող է կազմակերպվել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած 40 միլիարդ դրամից ավելի ներդրումային ծրագրի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած վայրերում և չափանիշներին համապատասխան:

դ) շահումով մեքենայացված խաղ կարող է կազմակերպվել քաղաքային համայնքների վարչական սահմաններից դուրս (բացառությամբ՝ Երևանից «Զվարթնոց» օդանավակայան տանող ճանապարհահատվածի (Վաղարշապատի խաչուղու և օդանավակայանի ճանապարհների երթևեկելի մասերի):

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի դ) կետով Երևանից «Զվարթնոց» օդանավակայան տանող ճանապարհահատվածի (Վաղարշապատի խճուղու և օդանավակայանի ճանապարհների երթևեկելի մասերի) համար սահմանված բացառության, որն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից: